ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/171 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով

մարզագույքի (8 դպրոցների համար) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացումը տեղի ունեցավ 07.10.2026թ. ժամը 14:30-ին Էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան /նախագահ/

Հանձնաժողովի անդամ՝ Արման Երանոսյան

Էլեն Ստեփանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լիլյա Ղասաբյան

1. **Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1. **ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/171** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. **Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված **ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/171** ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Հասցե, էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոս
1.	mark LLC	-
2.	«ՄՄ 55» ՍՊԸ	Երևան,Արաբկիր Լ. Խեչոյան փողոց 1/15 S mkrtchyanmanya.mm@gmail.com, +(374) 55222270
3.	ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 109/21 givova-arm@mail.ru, +(374) 44330030
4.	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ	ՀՀ , ԱՐԱՐԱՏ ՄԱՍԻՍ ԳԵՏԱՓՆՅԱ 18 Փ. ՆԿՈՒՂ 14 btraiding@list.ru, +(374) 98680718
5.	Սիգմա Էլեկտրոնիքս ՍՊԸ	Երևան, Նոր Արեշ 41փ., 111տ., sigma.electronics111@gmail.com, +(374) 33085503
6.	ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ	Երևան, Դավիթ Բեկի 180/26 h5r.gasparyan@yandex.com, +(374) 77699551
7.	ՎԱՆԵՍԱ ՍՊԸ	Ք. Երևան, ՇԵՆԳԱՎԻԹ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ Փ. 24/3, vanesa.tender@mail.ru, (+374) 99016661
8.	«ՄՄ 55» ՍՊԸ	Երևան,Արաբկիր Լ.Խեչոյան փողոց 1/15 S, mkrtchyanmanya.mm@gmail.com, +(374) 55222270

3. **Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3.1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:
Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1. Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝

Չափաբաժնի համար	Չբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
				Արժեք	ԱԱՀ	Գին	
1	1	**mark LLC**	1920000	**143800**	28760	**172560**	
	2	«ՄՄ 55» ՍՊԸ		1454000	290800	1744800	ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետ
	3	ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ		1470000	294000	1764000	
	4	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ		3000000	600000	3600000	Մերժված համակարգի կողմից՝ նախահաշվային գինը գերազանցելու հիմքով
	5	Սիգմա Էլեկտրոնիքս ՍՊԸ		5000000	1000000	6000000	
	6	ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ		8545101	1709020.2	10254121.20	
	7	ՎԱՆԵՍԱ ՍՊԸ		100000000	20000000	120000000	
2	1	**ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ**	2100000	**1690000**	338000	**2028000**	
	2	ՎԱՆԵՍԱ ՍՊԸ		1715000	343000	2058000	ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետ
	3	ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ		1750000	350000	2100000	
	4	«ՄՄ 55» ՍՊԸ		1750000	350000	2100000	
	5	Սիգմա Էլեկտրոնիքս ՍՊԸ		5000000	1000000	6000000	Մերժված համակարգի կողմից՝ նախահաշվային գինը գերազանցելու հիմքով
	6	ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ		8545101	1709020.2	10254121.20	
	7	mark LLC		98585850	19717170	118303020	
3	1	**mark LLC**	1260000	**85000**	17000	**102000**	
	2	ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ		850000	170000	1020000	ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետ
	3	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ		888888	177777.6	1066665.60	
	4	Սիգմա Էլեկտրոնիքս ՍՊԸ		989500	197900	1187400	
	5	ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ		8545101	1709020.2	10254121.20	Մերժված համակարգի կողմից՝ նախահաշվային գինը գերազանցելու հիմքով
	6	ՎԱՆԵՍԱ ՍՊԸ		100000000	20000000	120000000	
4	1	**«ՄՄ 55» ՍՊԸ**	360000	**162000**	32400	**194400**	
	2	ՎԱՆԵՍԱ ՍՊԸ		220000	44000	264000	ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն
	3	ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ		240000	48000	288000	

							որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետ
	4	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ		2000000	400000	2400000	Մերժված համակարգի կողմից՝ նախահաշվային գինը գերազանցելու հիմքով
	5	Սիգմա էլեկտրոնիքս ՍՊԸ		5000000	1000000	6000000	
	6	mark LLC		98585850	19717170	118303020	
5	**1**	**Սիգմա էլեկտրոնիքս ՍՊԸ**	**220000**	**131866**	26373.2	**158239.20**	
	2	ՎԱՆԵՍԱ ՍՊԸ		133700	26740	160440	ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետ
	3	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ		135555	27111	162666	
	4	ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ		140000	28000	168000	
	5	mark LLC		98585850	19717170	118303020	Մերժված համակարգի կողմից՝ նախահաշվային գինը գերազանցելու հիմքով
6	**1**	**ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ**	**220000**	**132500**	26500	**159000**	
	2	Սիգմա էլեկտրոնիքս ՍՊԸ		136166	27233.2	163399.20	ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետ
	3	ՎԱՆԵՍԱ ՍՊԸ		138000	27600	165600	
	4	ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ		140000	28000	168000	
	5	mark LLC		98585850	19717170	118303020	Մերժված համակարգի կողմից՝ նախահաշվային գինը գերազանցելու հիմքով
7	1	**«ՄՄ 55» ՍՊԸ**	**4158400**	**1760000**	352000	**2112000**	
	2	ՎԱՆԵՍԱ ՍՊԸ		1880000	376000	2256000	ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետ
	3	ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ		2895000	579000	3474000	
	4	Սիգմա էլեկտրոնիքս ՍՊԸ		5000000	1000000	6000000	Մերժված համակարգի կողմից՝ նախահաշվային գինը գերազանցելու հիմքով
	5	ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ		5000000	1000000	6000000	
	6	ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ		8545101	1709020.2	10254121.20	
	7	mark LLC		98585850	19717170	118303020	

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության մասին.

5.1. Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված

ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.9 կետի սահմանված ժամկետում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 311 սենյակ հասցեում:
Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 09.10.2026թ. ժամը 9:30-ին

6. **Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության մասին.**

6.1. **«ՄՄ 55» ՍՊԸ-ի կողմից 4-րդ և 7-րդ չափաբաժինների համար** ներկայացված հայտում առկա են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:
Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.2. **«mark LLC»-ի կողմից 1-ին, 3-րդ չափաբաժինների համար** ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Բացակայում է Հավելված 1 Դիմում հայտարարությունը,
- բացակայում է կազմակերպության իրական շահառուների կայքէջի հղումը պարունակող փաստաթուղթը՝ Հավելված 1.3-ը,
- բացակայում է ապրանքի ամբողջական նկարագիրը,
- կազմակերպությունը 23.09.2026թ. դրությամբ ՀՀ ՖՆ-ի կողմից ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում: Հայտը շտկման ենթակա չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.3. **«ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ի կողմից 2-րդ, 6-րդ չափաբաժինների համար** ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- բացակայում է կազմակերպության իրական շահառուների կայքէջի հղումը պարունակող փաստաթուղթը՝ Հավելված 1.3-ը,
- բացակայում են ապրանքների ամբողջական նկարագրերը,
- Հավելված 1 դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ և ներկայացված է այլ գնման ընթացակարգի համար,
- Հավելված 1 դիմում-հայտարարության մեջ նշված մասնակցության չափաբաժինները չեն համապատասխանում ներկայացված գնային առաջարկներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.4. **«Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից 5-րդ չափաբաժնի համար** ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, իսկ առկա փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- բացակայում է կազմակերպության իրական շահառուների կայքէջի հղումը պարունակող փաստաթուղթը՝ Հավելված 1.3-ը,
- բացակայում են ապրանքների ամբողջական նկարագրերը,
- Հավելված 1 դիմում-հայտարարությունը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. **Գնահատման գործընթացի կասեցման մասին.**

7.1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և **«ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ին, «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ –ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել համապատասխանաբար 6.1, 6.2, 6.3, 6.4 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:
Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.2. Հանձնաժողովի նիստը շարունակել **«ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ի, «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ–ի** կողմից անհամապատասխանությունները շտկելուց հետո՝ ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:
Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 19.10.2026թ.

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1. **«ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ի, «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ–ի կողմից** սահմանված ժամկետում շտկվել են 6.3, 6.4 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:
Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.

9.1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից.

- **2-րդ, 6-րդ չափաբաժինների մասով** ընտրված մասնակից ճանաչել **ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ-ին,**
- **5-րդ չափաբաժնի մասով** ընտրված մասնակից ճանաչել **Սիգմա Էլեկտրոնիքս ՍՊԸ-ին,**
- **4-րդ, 7-րդ չափաբաժինների մասով** ընտրված մասնակից ճանաչել **«ՄՄ 55» ՍՊԸ-ին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9.2. Հիմք ընդունելով «Գնուների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, սույն արձանագրության 6.2 կետը՝ «mark LLC»-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:
Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9.3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել՝

- «ՄՄ 55» ՍՊԸ-ի, ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի հայտերը՝ **1-ին չափաբաժնի մասով,**
- ՎԱՆԵՍԱ ՍՊԸ-ի, ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի, «ՄՄ 55» ՍՊԸ-ի հայտերը՝ **2-րդ չափաբաժնի մասով,**
- ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի, ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ-ի, Սիգմա Էլեկտրոնիքս ՍՊԸ-ի հայտերը՝ **3-րդ չափաբաժնի մասով,**
- ՎԱՆԵՍԱ ՍՊԸ-ի, ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի հայտերը **4-րդ չափաբաժնի մասով,**
- ՎԱՆԵՍԱ ՍՊԸ-ի, ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ-ի, ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ հայտերը **5-րդ չափաբաժնի մասով,**
- Սիգմա Էլեկտրոնիքս ՍՊԸ-ի, ՎԱՆԵՍԱ ՍՊԸ-ի, ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ հայտերը **6-րդ չափաբաժնի մասով,**
- ՎԱՆԵՍԱ ՍՊԸ-ի, ՍՓԼԱՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի հայտերը **7-րդ չափաբաժնի մասով:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9.4. Համակարգի կողմից՝ գնային առաջարկները նախահաշվային գինը գերազանցելու հիմքով մերժվել է՝

- ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ-ի, Սիգմա Էլեկտրոնիքս ՍՊԸ-ի, ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ-ի, ՎԱՆԵՍԱ ՍՊԸ հայտերը **1-ին չափաբաժնի մասով,**
- Սիգմա Էլեկտրոնիքս ՍՊԸ-ի, ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ-ի, mark LLC-ի հայտերը **2-րդ չափաբաժնի մասով**,
- ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ-ի, ՎԱՆԵՍԱ ՍՊԸ-ի հայտերը **3-րդ չափաբաժնի մասով,**
- ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ-ի, Սիգմա Էլեկտրոնիքս ՍՊԸ-ի, mark LLC-ի հայտերը **4-րդ չափաբաժնի մասով**,
- mark LLC-ի հայտը **5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով,**
- ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ-ի ՆՈՐՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի, mark LLC-ի հայտերը **6-րդ չափաբաժնի մասով,**
- Սիգմա Էլեկտրոնիքս ՍՊԸ-ի, ԱՐՎԻՏԱ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ-ի, ՀԱՐ ԳՐՈՒՊ 5 ՍՊԸ-ի, mark LLC-ի հայտերը **7-րդ չափաբաժնի մասով:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին.

10.1. Հաստատել **2-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ չափաբաժինների** մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10.2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ գնման ընթացակարգը **1-ին, 3-րդ չափաբաժինների մասով** հայտարարել չկայացած՝ պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10.3. Հրապարակել գնման ընթացակարգը **1-ին, 3-րդ չափաբաժինների մասով** չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10.4. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը՝ գնման ընթացակարգը **1-ին, 3-րդ չափաբաժինների մասով** չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 10-րդ օրացուցային օրը պատվիրատուի ղեկավարին ներկայացնել **«mark LLC»-ին** գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

Հրանտ Մկրտչյան /նախագահ/

Արման Երանոսյան

Էլեն Ստեփանյան

Լիլյա Ղասաբյան /քարտուղար